



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2019 թվականի թիվ 53-Ա
ք. Երևան

«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի մայիսի 13-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձայնային վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստադրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«5 Կանալ» «USU» «Ռեն ՏՎ» «Պերեց» «Դոմաշնիյ»	31.12.2019թ.
«Охотник и рыболов» «Шансон-ТВ»	31.12.2019թ.
«Discovery Channel» «РТР-Планета»	31.12.2019թ.